ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ ՝ Տնօրենի ժ/պ ՝__________ Լ. Քոթանջյան «31»օգոստոսի 2022թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ Լոռու մարզի «Դեբեդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի

___12______դասարանի դասղեկ ՝ _Դիանա Կիրակոսյան__________

2022 – 2023 ուս տարի

## ԿՐԹԱ_ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 1.Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

Դասարանը բաղկացած է 3 հոգուց'2 տղա մեկ աղջիկ: Աշակերտները կազմակերպված են, կա ձևավորված կոլեկտիվ: Որպես ավարտական դասարան Մարգարյան Արմանուշը հաճախում է լրացուցիչ պարապմունքների, բուհ ընդունվելու համար:

### 2.Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում

-Վերհիշել դպրոցում գործող ներքին կանոնները:

-Ընտրել ավագ

-Սահմանել հերթապահություն

-Հետևել հաճախումներին, կարգապահությանը և առաջադիմությանը:

-Մասնակցել դպրոցական միջոցառումներին:

-Բացահայտել վատ սովորույթները և օգնել վերացնել դրանք:

-Բարեխիղճ վերաբերվել և օգտագործել դպրոցական գույքն ու դասագրքերը:

## 3.Հայեցի դաստիարակություն

### 3.1 Հոգևոր դաստիարակություն

Բացահայտվել Հայ Առաքելական եկեղեցու դերն ու նշանակությունը հայկական պետականության պահպանման գործում: Իմանալ տաղավար տոները և դրանց նշանակությունը: Բացատրել աղանդների վնասակարությունը

### 3.2 Գեղագիտական դաստիարակություն

Ծանոթանալ հայ և արտասահմանյան արվեստի գործիչների կյանքին և գործունեությանը:

### 3.3 Ռազմա – հայրենասիրական դաստիարակություն

Ծանոթանալ հայ ազգի նվիրյալների գաղափարներին և նրանց անցած ուղուն: Բացատրել հայ բանակի դերն ու նշանակությունը հայկական պետականության պահպանման գործում:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Կարևորել սպորտի դերը առողջ ապրելակերպի համար: Իմանալ հայ անվանի մարզիկներին:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Մարդն իր կյանքում ամեն ինչ ստեղծում է աշխատանքով և աշխատասիրության շնորհիվ: Բոլոր մասնագիտություններն էլ արժանի են հարգանքի: Պետք է ամեն մի մարդ իր մասնագիտությանը տիրապետի անթերի և այն կատարի սիրով:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Քննարկել երկիր մոլորակի համար վտանգավոր խնդիրները (ջուր, օդ, աղբի կուտակում): Քննարկել թե ինչպես պայքարել դրանց դեմ:

3.7 Դպրոց – ընտանիք կապը

Անընդհատ կապի մեջ լինել աշակերտների,դասավանդող ուսուցիչների,ծնողների հետ : Տեղյակ պահել ծնողներին աշակերտների

վարքի և առաջադիմության մասին:

## ՈՒՍՈՒՄՆԱ - ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Ուսում. շաբաթ. | **Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակությունը**<br>/առաջին կիսամյակ - 15 շաբաթ,2 օր/ | **Կատարողներ** |
|---|---|---|
| 1.09 | Գիտելիքի օրվա առթիվ կազմակերպել միջոցառում: Առաջին զանգ: | Աշակերտ դասղեկ |
| 11.09 | Կազմակերպչական հարցեր: Ընտրել ավագ, աշխորհրդի անդամ, ծնողական խորհուրդ: | Աշակերտ դասղեկ,ծնող |
| 18.09 | Զրույց ՀՀ անկախության օրվա հետ կապված: Քննարկել աշակերտների դերը որպես անհատ հայրենիքի անկախության և պաշտպանության գործում: | Աշակերտ դասղեկ |
| 25.09 | Ճանաչենք մեր գյուղը: Ծանոթանալ գյուղի հիմնադրման պատմությանը: | Աշակերտ դասղեկ |
| 5.10 | Զրույց 'ինչ դեր ունի ուսուցիչը մեր կյանքում: | Աշակերտ |
| 12.10 | Ազնիվ և անկեղծ հարաբերությունները մեր դասարանում թեմայի շուրջ բնութագրել միմյանց, ինչ կփոխեիք ավելի առողջ հարաբերությունները ստեղծելու համար: | Աշակերտ դասղեկ |
| 18.10 | Զրույց<<իմ սիրած ազգային հերոսը>>թեմայով: | Աշակերտ դասղեկ |
| 26.10 | Քննարկել<<Ապրելով կատարյալ աշխարհում>>վարժանք խաղը, վերլուծել հետևյալ հարցերը<br>-խաղաղության նշանակությունը<br>-ներքին խաղաղության այլ մարդկանց և միջավայրի հետ:<br>-խաղաղասեր վարքի ձևավորում: | Աշակերտ դասղեկ |
| 3.11 | Զրույց -ինչ խնդիրներ կան մեր համայնքում, որոնք հուզում են մեզ, ինչպես կարելի է կարգավորել դրանք: | Աշակերտ դասղեկ |
| 10.11 | Զրույց<<Աշխարհի առաջատար խնդիրներ>>: | Աշակերտ դասղեկ |
| 24.11 | Զրույց<<Պատասխանատվություն և անպատասխանատվություն>>:Ինչ է թաքնված այս արտահայտություններում: | Աշակերտ դասղեկ |
| 6.12 | Զրույց (այցելություն թանգարաններ թատրոն և համերգ) քննարկել տպավորությունները: | Աշակերտ դասղեկ |
| 13.12 | Քննարկել Ամանորյա միջոցառմանը նվիրված ծրագրերը և որոշել աշակերտների դերակատարումները: | Աշակերտ դասղեկ |
| 20.12 | Քննարկել և ամփոփել առաջին կիսամյակում ցուցաբերած առաջադիմություն որը,քառորդների ամփոփում, որոշել 2-րդ կիսամյակում անցնելիք առարկաները: | Աշակերտ դասղեկ |
| 16.01 | Զրույց<<Բանակի դերն ու նշանակությունը հայկական պետականության | Աշակերտ |

| | | |
|---|---|---|
| | պահպանման գործում>> թեմայով: | դասղեկ |
| 23.01 | Ինչպես պայքարել անտարբերության դեմ: | Աշակերտ դասղեկ |
| 6.02 | Ինչպես պահպանել առողջությունը և խուսափել անցանկալի վիրուսներից: | Դասղեկ, բուժքույր, աշակերտ - |
| 13.02 | Դառն է ճշմարտությունը ինչպես նայել դրա աչքերին: | Աշակերտ դասղեկ |
| 20.02 | Բնական աղետները և դրանց դիմակայելու եղանակները: | Աշակերտ դասղեկ |
| 27.02 | Զրույց Սուրբ Սարգսի և Տեարն ընդառաջ եկեղեցական տոների մասին: | Աշակերտ դասղեկ |
| 6.03 | Հայ կնոջ դերը պատմության էջերում: | Աշակերտ դասղեկ |
| 13.03 | 21րդ դարի կնոջ կերպարը: | Դասղեկ աշակերտ |
| 20.03 | Մայրության և գեղեցկության տոնի խորհուրդը քրիստոնեաների կյանքում: | Աշակերտ դասղեկ |
| 27.03 | Քննարկել Սուրբ զատիկին նվիրված համադպրոցական միջոցառմանը և աշակերտների մասնակցությունը համադպրոցական միջոցառմանը: | Աշակերտ դասղեկ կազմակերպիչ |
| 3.04 | Զրույց<<Արցախն այսօր>>: | Աշակերտ դասղեկ |
| 10.04 | Զրույց<<Ուժի,փառքի և անմահության մասին>>: | Աշակերտ դասղեկ |
| 17.04 | <<Ոչ ցեղասպանությունը>>թեմայի քննարկում: | Աշակերտ դասղեկ |
| 8.05 | Զրույց<<Դպրոցի կարևորությունը մեր կյանքում: | Աշակերտ դասղեկ |
| 15.05 | Նախապատրաստական աշխատանքներ Վերջին զանգի միջոցառման հետ կապված: | Աշակերտ դասղեկ,ծնող |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |

## ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

| Շաբաթ | Թեմա | Ծանոթություն |
|---|---|---|
| 1 | Այց Վանաձորի Երկրագիտական թանգարան | |
| 2 | Այցելություն Ստեփան Զորյանի տուն-թանգարան | |
| 3 | Վանաձորի Աբելյանի անվան թատրոնը | |